ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/207

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Զ. Մուրադյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131» ծածկագրով գնանշման հարցում, ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18641-2019 գրությամբ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 06.11.2019թ. թիվ 01/61-23389 գրության հիման վրա, 12.11.2019թ.-ին «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 12.11.2019թ.-ի և նույն օրը կայացված որոշմամբ գործը ընդունվել է վարույթ ու 20.11.2019թ.-ին և 04.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.12.2019թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 06.11.2019թ. թիվ 01/61-23389 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

««Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀՄՇՁԲ-19/131» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով Մասնակիցը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող և համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3- րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտի հանրագումարը հավասար է զրոյի: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով առաջարկել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից ներկայացվել է 2019 թվականի եռամսակային հաշվեվություն՝ շրջանառության հարկի հաշվարկ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի դիտարկվել որպես հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտ, Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և Կարգի 48-րդ կետի համաձայն մերժվել է: Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18641-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

«Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ի տնօրենը ներկայանալով հրավիրված նիստերին, բանավոր կերպով հայտնել է, որ հայտը ներկայացնելու նախորդող տարիների ֆինանսական միջոցներ եզրույթը հասկացել է 2019թ.-ը ներառյալ, այսինքն՝ հայտը ներկայացնելու պահից հաշված նախորդող տարիների համար:

4. <u>ՍՑ-LO-2019/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կողմից ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 27.09.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի դրույթները, որոշել է մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշներն հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.10.2019թ.-ի տրված տեղեկատվության համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:

Հանձնաժողովի 21.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, սակայն չի բավարարում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, համաձայն որի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն

եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը կասեցրել է գնահատման գործընթացը և առաջարկել «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 25.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, այն հանգամանքների հաշվառմամբ, որ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ չի ունեցել, բացակայել է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը և սահմանված երեք օրվա ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.11.2019թ.-ին թիվ 01/61-23389 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18641-2019 գրությամբ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 27.09.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 10.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության հիման վրա 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի դրույթները, որոշել է մասնակցի տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե, ինչպես նաև ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշներն հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.10.2019թ.-ի տրված տեղեկատվության համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը 0 ՀՀ դրամ է:

Հանձնաժողովի 21.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, սակայն չի բավարարում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին, համաձայն որի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն

եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը կասեցրել է գնահատման գործընթացը և առաջարկել «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 25.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, այն հանգամանքների հաշվառմամբ, որ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ չի ունեցել, բացակայել է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը և սահմանված երեք օրվա ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.11.2019թ.-ին թիվ 01/61-23389 գրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 25.10.2019թ.-ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 25.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 06.11.2019թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ

հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի

գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.11.2019թ.-ի թիվ 26/26-1/18641-2019 գրությամբ «Զի Էնդ Զի Քոնսթրաքթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/207 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**